# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ

2024թ. հուլիսի 4 -ին, N 197 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՐԱՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետը և ՀՀ Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդուհի Արամյանի 2024 թվականի հուլիսի 3-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդուհի Արամյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 18-ից օգոստոսի 21-ը ներառյալ:
2. Վարդուհի Արամյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Հացաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Տարոն Մարտիրոսյանին:
3. Վարդուհի Արամյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 22-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 04.07.2024 16:37:37 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309800457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ